

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՃԱՆԱԿԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 08-Ի ՆԻՍՏԻ

ք. Երևան

«08» ապրիլի 2025թ.

2025 թվականի ապրիլի 08-ին, ժամը 09:00-ին տեղի ունեցավ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի (այսուհետ նաև՝ ՀԽ) նիստ:

Նիստի օրակարգը նախապես ներկայացվել էր Հոգաբարձուների խորհրդի անդամներին «Mulberry 2.0» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով:

Օրակարգում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի՝ սեփական դիմումի հիման վրա աշխատանքից ազատում.

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրենի ընտրություն:

Նիստին մասնակցել են՝

Դ. Խուդաբայան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀԽ նախագահ
Ե. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ղեկավար, ՀԽ անդամ
Ա. Գուգարաց	ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի պարտականությունները ժամանակավոր կատարող, ՀԽ անդամ
Ա. Հովհաննիսյան	ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ, ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
Ա. Ադիլխանյան	ՀՀ փոխվարչապետի գրասենյակի ղեկավար, ՀԽ անդամ
Ք. Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ
Ա. Ավանեսյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
Լ. Սիրականյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, ՀԽ անդամ
Ա. Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական (ճանապարհային ոլորտը համակարգող), ՀԽ անդամ

Նիստին չի մասնակցել՝

Գ. Խաչատրյան ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար, ՀԽ անդամ

ՀՀ ՏԿԵ նախարար, ՀԽ նախագահ Դ. Խուդաթյանը ողջունեց նիստի մասնակիցներին:

Անդրադառնալով օրակարգում ընդգրկված 1-ին հարցին՝ Դ. Խուդաթյանը շնորհակալություն հայտնեց Հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Զոհրաբյանին՝ պատասխանատու և սրտացավ աշխատանքի համար:

ՀԽ անդամներ Ե. Վարդանյանը և Ա. Ադիլխանյանը ևս շնորհակալություն հայտնեցին Ա. Զոհրաբյանին՝ համատեղ և ստացված աշխատանքի համար:

Անցնելով օրակարգի 2-րդ հարցին՝ Դ. Խուդաթյանը ներկայացրեց Հիմնադրամի գործադիր տնօրենի թեկնածու Ա. Չերչինյանին՝ անդրադառնալով վերջինիս աշխատանքային գործունեությանը, մասնագիտական և անձնային բարձր որակական հատկանիշներին:

Օրակարգի 1-ին հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ 9 կողմ, 0 դեմ:

Օրակարգի 2-րդ հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները՝ 9 կողմ, 0 դեմ:


Քվեարկությունը համարվում է կայացած:

Նիստի արդյունքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշեց.

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Ա. Զոհրաբյանին՝ սեփական դիմումի հիման վրա ազատել աշխատանքից:

2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն ընտրել Ա. Չերչինյանին:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝



Դ. Խուդաթյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար՝



Ա. Հայրապետյան